Նոր ազգանվան պատմությունը

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Bookmark

1

1966-ի գարնանը Լիլան սաստիկ հուզված ինձ վստահեց մի մետաղյա տուփ, որի մեջ կար ութ տետր: Ասաց, որ դրանք այլևս հնարավորություն չունի տանը պահելու, վախենում է, որ ամուսինը կարող է կարդալ: Ես առանց ավելորդ հարցերի վերցրի տուփը՝ թույլ տալով ինձ հեգնախառն ակնարկել չափից դուրս ձգված լարի վերաբերյալ, որով նա փաթաթել էր տետրերը: Այդ ժամանակաշրջանում մեր հարաբերություններն այնքան էլ նորմալ չէին, բայց կարծես թե միայն ես էի այդպես մտածում: Այն սակավաթիվ անգամները, երբ հանդիպում էինք, նա բարեհամբույր էր, սիրալիր, զերծ որևէ կծու խոսքից:

Երբ ինձ խնդրեց երդվել, որ ոչ մի պայմանով տուփը չեմ բացի, ես, բնականաբար, երդվեցի: Բայց հենց որ գնացք նստեցի, քանդեցի կապը, դուրս բերեցի տետրերը և սկսեցի կարդալ: Դա, իհարկե, նրա օրագիրը չէր, չնայած այնտեղ իր կյանքի վերաբերյալ մանրամասն պատմություններ կային՝ տարրական դպրոցի ավարտից սկսած: Ավելի շուտ ասես գրելու ցանկություն ունեցող մարդու մտավարժանքներ լինեին՝ հարուստ նկարագրություններով՝ ծառի ճյուղի, լճակների, քարի, սպիտակ ոստերով տերևի, տան կաթսաների, սրճեփի տարբեր մասերի, կրակարանի, ածուխի և ածխափոշու, բակի մանրակրկիտ քարտեզի, խճուղու, լճակներից այն կողմ ավտոմեքենայի ժանգոտ երկաթե կմախքի, այգիների և եկեղեցու, երկաթուղու երկայնքով աճող բուսականության մասին, նոր շենքերի, ծնողների տան, հոր և եղբոր գործիքների, նրանց շարժումների մասին, երբ կոշիկներ էին վերանորոգում: Հատուկ բծախնդրությամբ էին նկարագրված օրվա տարբեր ժամերի գույները: Բայց միայն նկարագրական էջեր չէին, որ հանդիպում էին: Կային առանձնացված բառեր՝ բարբառով և գրական իտալերեն գրված, երբեմն շրջանակի մեջ վերցրած՝

առանց մեկնաբանության, լատիներենից և հունարենից թարգմանական վարժություններ, նաև անգլերեն ամբողջական հատվածներ, որոնք նկարագրում էին թաղամասի խանութները, ապրանքները, մրգով և բանջարեղենով բեռնված սայլակը, որը Էնցո Սկանոն ամեն օր փոխադրում էր փողոցից փողոց՝ էշի սանձափոկից բռնած: Կային բազմաթիվ խորհրդածություններ կարդացած գրքերի, եկեղեցու կինոսրահում տեսած ֆիլմերի մասին և շատ գաղափարներ Պասկուալեի հետ քննարկումներից կամ մեր երկուսի զրույցներից: Ճիշտ է, այդ մտքերը ցաքուցրիվ էին, բայց ցանկացած բան, որ Լիլան ամփոփում էր իր գրվածքներում, մեծ ազդեցություն էր թողնում՝ ներառյալ նրա 11 կամ 12 տարեկանում գրածները, որտեղ ես չհայտնաբերեցի ոչ մի տող, որը մանկամտության երանգներ պարունակեր:

Արտահայտությունները շատ հստակ էին, անթերի կետադրությամբ և վայելչագեղ ձեռագրով գրված, ինչպես մեզ սովորեցրել էր ուսուցչուհի Օլիվիերոն: Բայց շատ դեպքերում Լիլան ասես թմրանյութ էր ներարկել իր երակները, և թվում էր, թե չի կարողացել պահել ինքն իրեն պարտադրած կանոնները: Այդպիսի դեպքերում ամեն ինչ դառնում էր տանջալից, նախադասությունները ձեռք էին բերում չափազանց ջղագրգիռ ռիթմ, կետադրությունը չքանում էր: Սովորաբար նրան կարճ ժամանակ էր պետք լինում վերագտնելու իր հանգիստ և պարզ ընթացքը: Սակայն պատահում էր նաև, որ կտրուկ ընդհատում էր գրելը և էջի մնացած մասը լցնում էր նկարներով՝ պատկերելով գալարուն ծառեր, սապատավոր և ծխացող լեռներ կամ մռայլ դեմքեր: Ես տպավորվել էի ինչպես այդ հաջորդականությունից, այնպես էլ խառնաշփոթից, և որքան շատ էի կարդում, այնքան ինձ ավելի խաբված էի զգում: Որքան փորձառություն էր զգացվում այն նամակում, որը նա ինձ Իսկիա էր ուղարկել տարիներ առաջ. ուրեմն դրա համար էր այդքան լավ գրված: Բոլոր տետրերը հետ դրեցի տուփի մեջ՝ ինքս ինձ խոստանալով այլևս չբացել:

Բայց հետո չդիմացա. այդ տետրերը գայթակղության ուժ ունեին, որը Լիլան դեռ մանկուց տարածում էր իր շուրջը: Նա անողոք ճշգրտությամբ էր նկարագրել թաղամասը, իր հարազատներին, Սոլարաներին, Ստեֆանոյին, ցանկացած անձնավորության կամ առարկա: Եվ ինչպիսի կամայականությամբ էր վարվել ինձ հետ՝ մեկնաբանելով այն ամենը, ինչի մասին խոսել էի, ինչի մասին մտածում էի՝ իմ սիրելի անձանց, նույնիսկ իմ ար-

տաքինի: Սակայն մեկնաբանել էր միայն այն պահերը, որոնք վճռորոշ էին իր համար՝ առանց որևէ մեկի կամ որևէ բանի մասին անհանգստանալու: Ահա այն բացառիկ գոհունակությունը, որն ապրել էր, երբ 10 տարեկանում գրել էր իր փոքրիկ պատմվածքը՝ *Երկնագույն փերին*: Նույնպիսի հստակությամբ էր նկարագրված, թե ինչքան էր տառապել, երբ մեր ուսուցչուհի Օլիվիերոն չէր բարեհաճել մի բառ անգամ ասել այդ պատմվածքի վերաբերյալ և անտեսել էր այն: Ահա տառապանքը և զայրույթը, երբ ես լքելով նրան գնացել էի միջնակարգ դպրոց: Ահա ոգևորությունը, որով սովորել էր կոշկակարի գործը, և երանության զգացումը, որն ապրել էր նոր կոշիկների գծագրերը ստեղծելիս, նաև հաճույքը, երբ իր եղբայր Ռինոյի հետ պատրաստեց առաջին զույգը: Ահա ցավը, երբ հայրը՝ Ֆերնանդոն, ասել էր, որ կոշիկները լավ չեն կարված: Այդտեղ, այդ էջերում, կար ամեն ինչ և հատկապես ատելություն Սոլարա եղբայրների նկատմամբ և այն դաժան վճռականությունը, որով նա մերժել էր եղբայրներից ավագի՝ Մարչելոյի սերը, նաև այն պահը, երբ որոշել էր նշանվել մեղմաբարո Ստեֆանո Կարաչիի՝ երշիկագործի հետ, որ հանուն իր սիրո որոշել էր գնել իրենց պատրաստած կոշիկների առաջին զույգը՝ երդվելով, որ հավերժ կպահի դրանք: Ա՜հ, իսկ այն գեղեցիկ պահը, երբ 15 տարեկանում հարուստ և նըրբաճաշակ տիկնոջ դերում էր՝ փեսացուին թևանցուկ զբոսնելիս: Վերջինս միայն հանուն իր սիրո խոշոր ներդրում էր կատարել հոր և եղբոր՝ *Հերուլո* ապրանքանիշի կոշիկի գործարանի հիմնադրման գործում: Ինչպիսի՜ գոհունակություն. իր երևակայության ուժով ստեղծված կոշիկները հիմնականում արդեն գործարկվում էին, նա ամուսնացած էր ու տուն ուներ նոր թաղամասում, և այդ ամենն ընդամենը 16 տարեկանում: Եվ ի՜նչ հրաշալի հարսանեկան տոնախմբություն էր, ինչքա՜ն երջանիկ էր: Եվ հանկարծ տոնախմբության ամենաթեժ պահին հայտնվել էր Մարչելո Սոլարան՝ եղբոր՝ Միքելեի հետ միասին, և նրա ոտքերին այն նույն կոշիկներն էին, որոնք իր ամուսինն այդքան թանկ էր գնահատել: Իր ամուսինը: Այդ ի՞նչ տեսակ մարդու հետ էր ամուսնացել: Հիմա արդեն կատարված փաստի առջև պոկելո՞ւ էր արդյոք նրա դեմքից այդ կեղծ դիմակը՝ ցուցադրելով իսկական, սարսափելի էությունը: Դրանք հարցեր էին և մեր թշվառության անսքող փաստերը: Ես օրեր ու շաբաթներ տարվել էր այդ էջերով: Դրանք ուսումնասիրեցի, նույնիսկ անգիր սովորեցի ինձ դուր եկած տողերը, այն տողերը, որոնք ինձ և՛ հիպնոսացնում էին, և՛ նվաստացնում:

Այդ ցուցադրական անմիջականության տակ ինչ-որ հնարք էր բանեցված, որը ես չէի կարողանում հասկանալ:

Վերջապես, նոյեմբերյան մի երեկո բարկացած դուրս եկա տնից՝ հետս վերցնելով այդ տուփը: Ես այլևս չէի կարողանում տանել Լիլայի ներկայությունը ո՛չ իմ կողքին, ո՛չ էլ իմ ներսում, նույնիսկ հիմա, երբ շատ ճանաչված էի, երբ իմ ինքնուրույն կյանքն ունեի Նեապոլից դուրս: Կանգնեցի Սոլֆերինո կամրջի[1] վրա՝ նայելու սառը մառախուղից թափանցող լույսերին: Տուփը դրեցի կամրջի ճաղաշարին, կամաց հրեցի, մինչև որ ընկավ գետի ջրերի մեջ՝ տանելով իր հետ Լիլայի մտքերն ու հուշերը: Տպավորություն էր, կարծես Լիլան էր գահավիժում՝ գետի ալիքների մեջ խորտակելով այն չարությունը, որով հակադարձում էր յուրաքանչյուրին: Ես զգացի ազատության շունչը: Այլևս թույլ չեմ տա ինձ իշխել: Այն ամենը, ինչին դիպչում էր Լիլան՝ մարդիկ, գրքեր ու կոշիկներ, մեղմություն ու բռնություն, հարսանիք ու առաջին ամուսնական գիշեր, վերադարձը թաղամաս նոր՝ սինյորա Ռաֆայելա Կարաչի կարգավիճակով, հմտորեն կարողանում էր օգտագործել իր նպատակներին հասնելու համար:

2

Ես չէի կարողանում հավատալ, որ Ստեֆանոն, լինելով այդքան բարեկիրթ և սիրառատ, կարող էր Մարչելո Սոլարային նվիրել այդ կոշիկները՝ Լիլա-երեխայի հիշատակը, նրա չարչարանքի դրոշմը:

Ես մոռացության մատնեցի Ալֆոնսոյին ու Մարիզային, որոնք սեղանի շուրջը նստած խոսում էին՝ իրար նայելով փայլատակող աչքերով: Այլևս ուշադրություն չդարձրի մորս հարբած ծիծաղին: Անէացան երաժշտությունը, երգչի ձայնը, պարող զույգերը, Անտոնիոն, որը դուրս էր եկել պատշգամբ և խանդից կուրացած սևեռուն նայում էր ապակեպատ ծածկից դուրս, մանուշակագույն քաղաքին ու ծովին: Աղոտացավ նույնիսկ Նինոյի կերպարանքը, որ դահլիճից դուրս գալիս ասես հրեշտակապետ լիներ՝ առանց ավետման: Հիմա ես տեսնում էի միայն Լիլային, որը շատ հուզված ինչ-որ բան էր ասում Ստեֆանոյի ականջին, չափազանց գու-

[1] Ponte Solferino, Սոլֆերինո - կամուրջ Առնո գետի վրա, Պիզա քաղաքում:

նատ իր հարսանեկան զգեստի մեջ, իսկ նա լսում էր առանց ժպիտի, մինչդեռ անհանգստության սպիտակ բիծը նրա ճակատից դեպի աչքերն էր սահում, ասես դիմակահանդեսային դիմակ այրվող դեմքի վրա: Ի՞նչ էր տեղի ունենում, ի՞նչ կարող էր պատահել: Իմ ընկերուհին երկու ձեռքով դեպի իրեն էր քաշում ամուսնու թևը: Ամբողջ ուժով էր քաշում, և ես, որ նրան հիմնովին էի ճանաչում, զգում էի, որ կարողանալու դեպքում կպոկեր թևը նրա մարմնից և գլխավերևում պահած կանցներ ամբողջ դահլիճով մեկ՝ արյունը կաթեցնելով հագուստի քղանցքի վրա, և դա կօգտագործեր որպես գուրզ կամ ավանակի ծնոտոսկր՝ Մարչելոյի քիթ ու մռութը դիպուկ հարվածով ջարդելու համար: Դե, իհարկե, Լիլան կաներ դա, և այդ մտքից սիրտս կատաղի բաբախում էր, կոկորդս՝ չորանում: Հետո այդ երկու տղամարդկանց աչքերը կհաներ, պատառոտելով կպոկեր միսը նրանց դեմքի ոսկորներից: Հաստատ կաներ, և ես հասկացա, որ շատ էի ուզում, որ դա տեղի ունենար: Վերջ կդրվեր սիրահարվածությանն ու այդ անտանելի տոնախմբությանը, և այլևս չէր լինի ոչ մի գրկախառնություն Ամալֆիում գտնվող անկողնում: Խորտակել բոլորին և ամեն ինչ թաղամասում, կոտորած սարքել ու փախչել այստեղից, միայն Լիլան ու ես, գնալ հեռու մի վայրում ապրելու, միասին ուրախ անհոգությամբ իջնել հին աստիճաններով, անծանոթ քաղաքներում: Ինձ թվաց, թե այդ օրվա ճիշտ ելքը դա կլիներ: Եթե մեզ ոչինչ չէր կարող փրկել՝ ոչ փողը, ո՛չ տղամարդու մարմինը, ո՛չ էլ առավել ևս ուսումը, ուրեմն արժեր անմիջապես ոչնչացնել ամեն բան: Նրա զայրույթը փոխանցվեց ինձ: Դա մի ուժ էր, որը իմն էր և իմը չէր, որն ինձ համակեց փախուստի դիմելու մարմաջով: Ես ուզում էի, որ այդ ուժը տարածվեր: Բայց զգացի նաև, որ վախենում էի այդ անծանոթ զգացումից: Միայն ավելի ուշ հասկացա, որ իմ բոլոր դժբախտություններն այն պատճառով են, որ ես ընդունակ չեմ բռնի գործողությունների, ես վախենում եմ դրանցից, գերադասում եմ լռել՝ կուտակելով վիրավորանքը և չարությունը: Բայց Լիլան՝ ոչ: Երբ նա թողեց իր տեղը, այնպիսի վճռականությամբ կանգնեց, որ սեղանը, դանակ-պատառաքաղները կեղտոտ ափսեների մեջ ցնցվեցին, իսկ բաժակներից մեկը շրջվեց: Մինչ Ստեֆանոն մեքենաբար շտապում էր կասեցնել գինու շիթը, որը հոսում էր դեպի սինյորա Սոլարայի հագուստը, Լիլան արագ քայլերով դուրս եկավ հետևի դռնից՝ ամեն անգամ քաշելով հագուստի խճճվող քղանցքը:

Մտածեցի վազել նրա հետևից, սեղմել ձեռքը, շշնջալ՝ հեռո՛ւ, հեռո՛ւ այստեղից: Բայց տեղիցս չշարժվեցի: Մի պահ վարանելուց հետո նրա հետևից գնաց Ստեֆանոն, որը հասավ նրան՝ անցնելով պարող զույգերի միջով:

Ես շուրջս նայեցի: Բոլորն էլ նկատել էին, որ հարսնացուն ինչ-որ բանից վրդովված է: Բայց Մարչելոն շարունակում էր զրուցել Ռինոյի հետ որպես իր հանցակցի, ասես շատ բնական էր, որ իր ոտքերին հենց այդ կոշիկներն էին: Աստիճանաբար ավելի ու ավելի անպարկեշտ էին դառնում մետաղների գործով վաճառականի կենացները: Ովքեր սեղանների և հրավիրվածների աստիճանակարգում իրենց նվաստացած էին զգում, ջանում էին հարմարվել իրավիճակին՝ թաքցնելով սեփական դժգոհությունը: Ոչ մեկը, ինձնից բացի, թվում էր, թե չի գիտակցել, որ հենց նոր տոնված ամուսնությունը, որը ենթադրաբար պետք է տևեր մինչև նորապսակների կյանքի վերջը, շրջապատված լիներ զավակներով և բազում թոռներով, ուրախություններով ու ցավերով, արծաթե և ոսկե հարսանիքներով, Լիլայի համար արդեն մեկընդմիշտ ավարտվել էր, ինչքան էլ որ ամուսինը փորձում էր ներում հայցել նրանից:

3

Բայց ավաղ, իրադարձություններն ինձ հիասթափեցրին: Նստեցի Ալֆոնսոյի և Մարիզայի կողքին՝ առանց ուշադրություն դարձնելու նրանց դատարկ խոսակցությանը: Սպասում էի խռովության ազդանշանի, բայց ոչինչ տեղի չունեցավ: Կանխատեսել, թե Լիլան ինչ էր մտածում, ինչպես միշտ, շատ դժվար էր. ես չլսեցի ո՛չ նրա գոռալը, ո՛չ նրա սպառնալիքները: Ստեֆանոն հայտնվեց կես ժամ հետո, շատ սիրալիր դեմքով: Փոխել էր հագուստը, ճակատի վրա և աչքերի շուրջ եղած սպիտակ բծերն անհետացել էին: Մոտեցավ ազգականներին և ընկերներին՝ սպասելով կնոջ գալուն, իսկ երբ վերջինս վերադարձավ դահլիճ արդեն ոչ թե հարսի զգեստով, այլ ճամփորդական հագուստով՝ բաց կապույտ, թափանցիկ կոճակներով կանացի կոստյումով և փոքրիկ, կապույտ գլխարկով, Ստեֆանոն անմիջապես միացավ նրան: Լիլան սկսեց երեխաներին բաժանել շաքարանուշները՝ վերցնելով դրանք արծաթե գդալով բյուրեղապակյա սկահակից, հետո գնաց դեպի սեղանները՝ բաժանելով հարսանեկան հու-

շանվերները նախ իր հարազատներին, ապա Ստեֆանոյի: Անտեսեց ամբողջ Սոլարա ընտանիքը և նույնիսկ իր եղբորը՝ Ռինոյին, որը նրան հարցրեց տագնապած ժպիտով՝ ինձ այլևս չե՞ս սիրում: Լիլան չպատասխանեց, հուշանվերը հանձնեց Պինուչային: Հայացքն անտարբեր էր, այտոսկրերը՝ սովորականից ավելի շեշտված: Երբ հերթը հասավ ինձ, նա առանց ժպիտի մեկնեց շաքարանուշներով լի խեցե զամբյուղիկը՝ փաթաթված սպիտակ շղարշով:

Այդ ընթացքում Սոլարաները սկսել էին նյարդայնանալ այդպիսի անքաղաքավարի վերաբերմունքից, բայց Ստեֆանոն շտկեց իրավիճակը՝ դեմքի խաղաղ արտահայտությամբ մեկ առ մեկ գրկելով նրանց և շշնջալով.

— Նա հոգնել է, պետք է համբերատար լինել:

Նա համբուրեց նաև Ռինոյին, որը մի դժգոհ ծամածռություն արեց: Լսեցի, որ ասաց.

— Դա հոգնածություն չէ, Ստե՛, այդ աղջիկը ծուռ է ծնվել, և ես ցավում եմ քեզ համար:

Ստեֆանոն լուրջ պատասխանեց.

— Ծուռ բաները կարելի է շտկել:

Հետո տեսա, որ վազում է կնոջ հետևից, որն արդեն հասել էր դռանը, մինչ նվագախումբն անկանոն հնչյուններ էր արձակում, և ներկաներից շատերը խռնվել էին վերջին հրաժեշտի համար:

Ուրեմն ոչ մի պառակտում, ուրեմն իրար հետ չէինք փախչելու աշխարհի ճանապարհներով: Պատկերացրի նորապսակներին՝ գեղեցիկ, նրբաճաշակ հագնված, որ նստում էին բաց թափքով ավտոմեքենան: Այստեղից կարճ ժամանակ անց նրանք ժամանելու էին Ամալֆի՝ իրենց ծովափնյա հանգստավայրի շքեղ հյուրանոցը, և յուրաքանչյուր մահացու վիրավորանք վերափոխվելու էր հեշտությամբ ջնջվող մի դժգոհության: Առանց ափսոսանքի: Լիլան վերջնականապես կտրվել էր ինձնից, և ես հանկարծ գիտակցեցի, որ իրականության մեջ հեռավորությունը շատ ավելի մեծ էր, քան պատկերացնում էի: Նա ամուսնացել էր և ամեն երեկո քնելու էր տղամարդու հետ՝ տուրք տալով ամուսնական ավանդույթին: Բայց կար մի բան, որը չէի հասկացել, և որն այդ պահին ակնհայտ դարձավ ինձ համար: Լիլան չգիտեր, թե ինչ գործարար համաձայնություն էր կնքված ամուսնու և Մարչելոյի միջև իր մանկական առաջին աշխատանքի հետ կապված, ընդունել էր, որ ամուսինն իր համար ավելի կարևոր էր, քան ցանկացած

որևէ այլ մարդ կամ առարկա: Եվ եթե նա արդեն հանձնվել էր, եթե արդեն կուլ էր տվել այդ վիրավորանքը, ուրեմն Ստեֆանոն, իրոք, թանկ էր նրա համար: Ուրեմն նրան սիրում էր, սիրում էր այնպես, ինչպես միայն գրքերում էին կարողանում սիրել: Նրբազգացություն, սուր միտք, հարուստ երևակայություն. ահա այն ամենը, ինչ բնորոշ էր Լիլային: Եվ նա զոհաբերում է այդ ամենը հանուն Ստեֆանոյի, որը պատկերացում անգամ չուներ, թե ինչ աներ դրանց հետ, թերևս կարող էր միայն կոտրել: Մտածեցի, որ ես ընդունակ չեմ լինի ոչ մեկին այդպես սիրել, նույնիսկ Նինոյին: Ես կարողանում եմ միայն գրքերի վրա ժամանակ ծախսել: Եվ մի պահ ինձ պատկերացրի այն ճզմված ապուրամանի նման, որով իմ քույր Էլիզան ուտելիք էր տալիս կատվի ձագին, մինչև նա մեծացավ ու այլևս չերևաց, իսկ ապուրամանը մնաց սանդղահարթակում՝ դատարկ ու փոշոտ: Հենց այդ պահին վախեցած համոզեցի ինքս ինձ, որ չափազանց հեռուն եմ գնացել: Չպետք է այդքան ինքնախարազանվել, մտածեցի, և պետք է ապրել այնպես, ինչպես Կարմելան, Ադան, Ջիլյոլան և նույն ինքը՝ Լիլան: Ընդունել թաղամասի կանոնները, մի կողմ դնել հպարտությունը, զսպել ինքնահավանությունը, քիթը չտնկել այն մարդկանց առաջ, ովքեր քեզ սիրում են: Երբ Ալֆոնսոն ու Մարիզան դուրս սահեցին, քանի որ դրսում նրանց սպասում էր Նինոն, ես մի լայն շրջան կատարեցի՝ մորիցս խուսափելու համար և հասա իմ ընկերոջը, որը կանգնած էր պատշգամբում:

Շատ թեթև էի հագնված, արևն արդեն մայր էր մտել, և սկսել էր ցրտել: Անտոնիոն, հենց որ տեսավ ինձ, մի ծխախոտ վառեց և ձևացրեց, որ շարունակում է ծովին նայել:

— Արի գնանք այստեղից,– ասացի:

— Սարատորեի որդու հետ գնա:

— Ուզում եմ քեզ հետ գնալ:

— Ստում ես:

— Ինչո՞ւ ես այդպես կարծում:

— Որովհետև, եթե նա քեզ ցանկանար, դու ինձ այստեղ կթողնեիր՝ առանց նույնիսկ հրաժեշտ տալու:

Դա ճիշտ էր, բայց ինձ զայրացրեց նրա բացահայտ անկեղծությունը: Խիստ վրդովված պատասխանեցի.

— Եթե չես հասկանում, որ այստեղ եմ գտնվում ինձ վտանգելով, քանի որ մայրս ամեն րոպե կարող է հասնել ինձ և ապտակների տարափ տեղալ

քո պատճառով, ուրեմն նշանակում է, որ միայն քո մասին ես մտածում, որ քեզ համար ես ոչ մի կարևորություն չունեմ:

Նա լսեց գրական իտալերեն հնչող իմ ձայնը, ընկալեց այդ երկար նախադասությունը, նաև ստորադասական նախադասությունները և կորցրեց համբերությունը: Շպրտեց ծխախոտը, բռնեց դաստակս հետզհետե ավելի քիչ վերահսկվող ուժով և գոռաց կոկորդում խեղդված ճիչով՝ ասելով, որ ինքն այստեղ էր ինձ համար, միայն ինձ համար, և ես էի նրան ասել, որ միշտ պետք է մնար իմ կողքին՝ եկեղեցում և տոնախմբության ժամանակ, այո՛, ես էի ասել և երդվել էի: Խոսում էր շնչահեղձ լինելով: Ասել էի՝ երդվի՛ր, որ ինձ երբեք մենակ չես թողնի: «Եվ ես ինձ համար կոստյում կարել տվեցի,– ասաց նա,– սինյորա Սոլարայից վերցրած փողերով, թաղվելով պարտքերի մեջ, միայն քեզ դուր գալու համար, քո ասածով անելու համար, նույնիսկ մեկ րոպե չմնալով մորս, եղբայրներիս ու քրոջս հետ, և ո՞րն է փոխհատուցումը, այն, որ ինձ հետ վարվեցիր, ինչպես մի տխմարի հետ՞, խոսեցիր բոլոր ժամանակների բանաստեղծի որդու հետ՝ ինձ նվաստացնելով բոլոր ընկերներիս առջև, ինձ հողին հավասարեցնելով, քանի որ ես քեզ համար ոչ ոք եմ, քանի որ դու կրթված ես, իսկ ես՝ ոչ, քանի որ ես չեմ հասկանում քո ասածները, ինչը ճիշտ է, շատ ճիշտ է, որ չեմ հասկանում, բայց Աստված մի՛ արասցե, Լենո՛ւ, ինձ նայի՛ր, նայի՛ր դեմքիս. եթե կարծում ես, թե կարող ես ինձ հրամայել, եթե կարծում ես, թե չեմ կարող քեզ ասել՝ բավական է, սխալվում ես: Դու ամեն ինչ գիտես, բայց չգիտես, որ եթե հիմա այս դռնից դուրս գաս ինձ հետ, եթե ես քեզ ասեմ՝ լավ, ոչինչ, և մենք գնանք այստեղից, բայց հետո իմանամ, որ հանդիպում ես դպրոցում կամ ով գիտի որտեղ քո այդ ոչնչության՝ Նինո Սարատորեի հետ, կսպանեմ քեզ, Լենո՛ւ, կսպանեմ, ուրեմն լավ մտածի՛ր, թող ինձ այստեղ անմիջապես,– հուսահատված ասաց նա,– թո՛ղ ինձ: Դա լավ կլինի քեզ համար»: Եվ այդ ասելիս ինձ էր նայում իր խոշոր ու կարմրած աչքերով, բառերն արտասանում էր՝ բերանը լայն բացելով, գոռալով, բայց ձայնը հազիվ էր լսվում, ռունգերը լայնացած ու սևացած էին, իսկ դեմքի վրա այնպիսի տառապանք կար, որ մտածեցի՝ միգուցե իրեն վնաս է պատճառում ներսից, քանի որ նախադասություններն այդ ձևով բղավելուց, կոկորդում կամ կրծքավանդակում պահելուց և չթողնելուց՝ օդում պայթեն, ասես երկաթի սուր կտորներ են դառնում ու վնասում նրա թոքերն ու կոկորդը:

Ես աղոտ կերպով զգում էի այդ հարձակման կարիքը: Դաստակիս շուրջն այդ աքցանները, վախը, որ ինձ կհարվածի, նրա այդ ցավագին բառերի հոսքը, ի վերջո, մխիթարեցին ինձ, և թվաց, որ, համենայն դեպս, նա հոգ է տանում իմ մասին:

— Ցավեցնում ես,– շշնջացի ես:

Նա դանդաղորեն թուլացրեց սեղմումը, բայց, բերանը լայն բացած, սևեռուն ինձ էր նայում: Դաստակիս մաշկը սկսում էր բոսորագույն դառնալ, ինչը կշիռ և հեղինակություն էր տալիս նրան՝ գրավելով ինձ:

— Ի՞նչ ես որոշել,– հարցրեց:

— Ուզում եմ քեզ հետ մնալ,– խոժոռված պատասխանեցի:

Նա փակեց բերանը, աչքերն արցունքով լցվեցին, նայեց դեպի ծովը, որ ժամանակ ունենա արցունքների հոսքը կանգնեցնել:

Կարճ ժամանակ անց մենք փողոցում էինք: Չսպասեցինք Պասկուալեին, Էնցոյին, աղջիկներին, հրաժեշտ չտվեցինք ոչ մեկին: Ամենակարևորն այն էր, որ մայրս մեզ չտեսներ, այնպես որ ոտքով գնացինք, թեպետ արդեն մթնել էր: Որոշ ժամանակ քայլում էինք կողք-կողքի, առանց իրար դիպչելու, հետո Անտոնիոն մի անվճռական շարժումով ձեռքը դրեց ուսիս: Ցանկանում էր ինձ հասկացնել, որ զգում է իր մեղքը: Քանի որ նա ինձ սիրում էր, որոշել էր մոռացության տալ այն ժամերը, որ անցկացրել էի Նինոյի հետ և համարել զգայական խաբկանք:

— Թևդ կապտե՞ց,– հարցրեց՝ փորձելով բռնել դաստակս:

Չպատասխանեցի: Սեղմեց ուսս իր խոշոր ձեռքով, ես նյարդային ցնցվեցի, ինչը նրան ստիպեց անմիջապես թուլացնել սեղմումը: Երկուսս էլ ինչոր բանի էինք սպասում: Երբ որպես հաշտության նշան ձգվեց դեպի ինձ, գրկեցի նրա գոտկատեղը:

4

Մենք անվերջ համբուրվում էինք ծառերի հետևում, շենքերի շքամուտքերում, նեղ ու մութ փողոցներում: Հետո ավտոբուս նստեցինք, ապա մեկ ուրիշը և հասանք կայարան: Ոտքով գնացինք դեպի լճակները՝ երկաթուղուն հարող ոչ բանուկ ճանապարհով՝ շարունակելով համբույրներ փոխանակել: